ԴԱՍԻ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ	# Անվտանգ համացանց Տևողություն՝ 45 րոպե	Առարկա՝ Ինֆորմատիկա Դասարան՝ V ա Ամսաթիվ՝ 13.03.2015 Ուսուցչուհի՝ Գոհար Տեր-Ղուկասյան

Դասից հետո	րոպե	Դասի ընթացքում	Դասից առաջ
Անդրադարձ Պարզել՝ որքանո՞վ իրականացավ դասի նպատակը: Պարզել, հատկապես դասի ո՞ր մասերն էին արդյունավետ: Ի՞նչ փոփոխություններ կարելի է անել տվյալ դասի հետ կապված: Դասի ուժեղ կողմերը: Թույլ կողմերը: Ժամանակի բաշխումը:	2	**Կազմակերպչական աշխատանք՝** ա) համոզվել, որ բոլորը իրենց տեղերում են. բ) հայտարարություններ անել՝ -Լսողներին չխանգարել, հարցի դեպքում ձեռքով իմաց տալ:	**Նախապատրաստում՝** ա) աշխատասենյակը պատրաստել դասի թեմային համապատասխան. բ) պատրաստել նյութերը, որոնք պետք է ցուցադրվեն:
	20	**Ջերմացում / Շարժառիթ՝** Ուշադրությունը կենտրոնացնող հարցեր: ● Ի՞նչ է համացանցը. ● Վերհիշել պատմությունը. ● Անցկացնել հարցում՝ - Ով ի՞նչ նպատակով է մտնում համացանց: Դիտել Anvtang hamacanc.pptx ներկայացումը: ● Քննարկել գլոբալ համացանցի վտանգները:	**Նպատակը՝** Ինֆորմացիոն անվտանգության ապահովում՝ 1. Ծանոթացում համացանցում անվտանգ աշխատելու կանոններին. 2. Ծանոթացում համացանցի տեղեկատվական տարածքում նավարկելու անվտանգությանը. 3. Նպաստել առցանց տեխնոլոգիաների պատասխանատու օգտագործմանը:
	7	**Զարգացում, իմաստի ընկալում՝** ● Թեստավորում. ● Նկարելուկների լուծում:	**Միջոցները՝** 1. Anvtang hamacanc.pptx ներկայացման ստեղծում: 2. Համացանցի օգտագործման նպատակների հարցաթերթիկի ստեղծում: 3. <<Անվտանգ համացանց>> թեստի ստեղծում: 4. Նկարելուկների ստեղծում համացանց թեմայով:
	10	**Կիրառում /Արժևորում՝** ● Տարբեր իրադրությունների առաջարկում. ● Քննարկում:	**Ակնկալիքներ՝** Ձևավորել գիտելիքներ անվտանգ համացանցի օգտագործման վերաբերյալ:
	3	**Գնահատում՝** **Արդյունքների ներկայացում**	**Այլընտրանք** Հարցերի տարափ, բարդ երեխաներ:
	3	**Դասի ամփոփում՝** Հետադարձ կապ, եզրափակում	**Ժամանակի բաշխում**

Իրադրություններ: Ի՞նչ կանեիր դու:

3) Աննան պետք է ռեֆերատ գրի Եվրոպայի միֆի մասին: Նա գրում է <<Եվրոպա>> և <<Միֆ>> բառերը որոնման համակարգում: Առաջին վեբ կայքը թվում է պարունակում է ամենը, ինչ նա ուզում է՝ տեքստ և նկարներ: *Կարո՞ղ է նա ուղղակի բառ առ բառ պատճենել:*	2) Աննան էլեկտրոնային նամակ է ստանում անծանոթ մարդուց: Թեման է՝ Զվարճալի <<համացանցային խաղեր>> և այն պարունակում է կից ֆայլ: Գայթակղիչ է: *Ի՞նչ կառաջարկեիր նրան անել:*	1) Աննան պատրաստվում էր առցանցային զրույցի Ջենիի հետ, երբ փոքրիկ պատուհան հայտնվեց՝ տեղեկացնելով, որ հակավիրուսային ծրագիրը ժամկետանց է: Նա իսկապես ուզում է ցանցում զրուցել Ջենիի հետ: *Ի՞նչ կպատահի, եթե նա ուշադրություն չդարձնի հաղորդագրությանը:*
6) Աննայի դասարանում սովորում են հարգալից վերաբերմունք դրսևորել ուրիշների նկատմամբ: Ուսուցիչն անդրադառնում է կռվի խնդրին և հանձնարարում է դասարանին մտածել վարքի կանոնների մասին: Աննան ուզում է առանձնահատուկ լինել ու որոշում է գրել համացանցային էթիկետի մասին՝ որպես կիբեր հետապնդումների կանխարգելման միջոց: *Կարո՞ղ ես նրան որոշ գաղափարներ հուշել:*	5) Արմենի ընկերը անպարկեշտ նամակներ է ստանում անծանոթից և տխրում: Արմենը վստահ է, որ դա անընդունելի վարքագիծ է և ուզում է օգնել ընկերոջը: *Ի՞նչ կարող է նա անել:*	4) Արմենը բջջային հեռախոս էր ստացել Ծննդյան տոներին և օգտագործում էր այն՝ զանգելով ընտանիքի անդամներին և հաղորդագրություններ ուղարկելով ընկերներին: Մի օր նա ընկերոջից տեսահոլովակ ստացավ, ուր նկարահանված էր, թե ինչպես էին ծեծում մի տղայի: Նա շատ անհանգստացավ: *Ի՞նչ պետք է նա անի: Արդյոք նա էլ պետք է տարածի այդ հաղորդագրությունը:*

Ղ=գ

Ղ=գ

g=u

,

,,,

n=un

b=d
p=q

,

,

,